ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«17» մարտի 2025թ. ԱՊՀՄ-322

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին
(ՀՎՀՀ՝ 00179816)
Հասցե՝ ք.Երևան, Աբելյան փող., 6/4շենք
TGA Բիզնես Կենտրոն 3-րդ հարկ, 310 սենյակ
հեռ. +374 77 41-41-08

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնանշման հարցման 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00179816) և կնքվել էր Պայմանագիր 20.08.2024-ին, որի ֆինանսական միջոցների տրամադրման վերաբերյալ Համաձայնագիրը կնքվել էր 09.01.2025թ-ին և կատարման ժամկետ էր սահմանված 28.02.2025թ-ը: 17.02.2025թ-ին ապրանքը մատակարարվել, որը տեսակի հաստատման և փորձարկման ընթացքում պարզ է դարձել, որ սարքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, որի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն և 10օրյա ժամկետ՝ ապրանքը նորով փոխարինելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, Պայմանագրի 6.3 կետի համաձայն գանձվում է տուգանք պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովուները սահմանված կարգով անհրաժեշտ է վճարել Պայմանագրում նշված հաշվեհամարներին:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, եթե մինչև 2025թ. մարտի 24-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, ապա կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.ԲԱԲԱՅԱՆ**

Կատարող՝ Ա.Ներսիսյան
Հեռ.՝010 232600 (137)